ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ*)

Եւրոպական երկու Ընդհանուր Վերատեսուչներ պիտի կարգուին Արեւելեան Անատոլեայի երկու հատուածներուն գլուխ՝ Պարոն Ա..... գլուխ այն հատուածի, որի մէջ մտնում են Էրզերումի, Տրապիզոնի և Սրվազի վիլայէթները. և Պարոն Բ..... այն հատուածի գլուխը, որ հասկացուում է Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբէքիրի վիլայէթները։

Ընդհանուր Վերատեսուչները կունենան իրենց հատուածների վարչական, արդարադատութեան, ոստիկանական և ժանդարմերիական կոնտրոլը։

Այն հանգամանքներում, ուր հանրային ապահովութեան ուժերը անբաւական կգտնուին, Ընդհանուր Վերատեսուչների խնդրանաց համաձայն, զինուորական ուժերը պիտի դրուին իրենց տրամադրութեան տակ, ձեռք առնուած միջոցները գործադրելու համար իր իրաւասութեան սահմաններում։

Ընդհանուր Վերատեսուչները, կարիք եղած դէպքում, պաշտօնանկ են անում այն բոլոր պաշտօնեաներին, որոնց մասին նրանք առաջ կ՝հաւաստիանան նրանց անբաւականութեան կամ վատ վարքի նկատմամբ, յանձնելով դատարանին նրանց, որոնք օրէնքով պատժուող յանցաւոր գործողութեան մէջ կ՝գտնուեն. նրանք փոխարինում են պաշտօնազուրկ ստորակարգ պաշտօնեաներին անուանակիր

*) «Արարատ»ի անցեալ փետրուարի համարում մենք տուել էինք Տաճկա-Հայաստանի բարենորոգումների ծրագրի թարգմանութիւնը «Русское Слово» թերթից առնելով, որովհետև այն ժամանակ դեռ հնարաւոր չէր իսկականը տպագրութեան տալ, այժմ այստեղ բերում ենք թարգմանարար Հայրապետական դիւանում ստացուած իսկական Ֆրանսերէն բնագրից։ Խմբ.

(titulaires) նորերով, որոնք պիտի լրացնեն օրէնքներով և կանոններով նախատեսած ընդունելութեան և ընդունակութեան պայմանները։ Նրանք իրաւունք պիտի ունենան Ն. Մ. Սուլթանի կառավարութեան ներկայացնել կարգուելիք բարձրագոյն պաշտօնեաներ։ Պաշտօնանկութեան ձեռք առած բոլոր միջոցների մասին նրանք անմիջապէս հաղորդում են հեռագրներով պատշաճաւոր Մինիստրութեան՝ համառօտակի պատճառաբանուած, ութ օրուայ ընթացքում նրանք պիտի ուղարկեն այդ պաշտօնեաների յուշատետր (dossier) և մի զեկուցումն մանրամասն պատճառաբանութիւններով։

Ծանրակշիռ դէպքերում, երբ անհրաժեշտ են ստիպողական կարգադրութիւններ անել, ընդհանուր վերատեսուչները պիտի վայելեն անմիջական կախակալութեան իրաւունք դատական անփոխելի պաշտօնեաների նկատմամբ այն պայմանով, որ անմիջապէս հաղորդուեն շարժառիթները Դատաստանական Դեպարտամենտին։

Այն պարագաներում, երբ նրանք կ՝հաւատանան, որ կուսակալների ձեռքով կատարուած գործողութիւնները պահանջում են չափազանց ստիպողական միջոցների դրդումն, Ընդհանուր Վերատեսուչները կ՝հաղորդեն հեռագրով պատճառը Ն. Գ. Մինիստրութեան, որն անմիջապէս ներկայացնում է Մինիստրական Խորհրդին և վերջինս պիտի որոշում կայացնի ամենաուշ չորս օրուայ ընթացքում՝ հաշուած Ընդհանուր Վերատեսչի հեռագրի ստացուելուց։

Հողային վէճերը պիտի վճռուեն անմիջական հսկողութեան տակ ընդհանուր վերատեսուչների։

Աւելի մանրամասն հրահանգները, նկատմամբ ընդհանուր վերատեսուչների պարտականութիւնների և իրաւասութիւնների, կաշխատասիրուեն նրանց նշանակուելուց յետոյ և նրանց աջակցութեամբ։

Այն դէպքում, երբ տասն տարուայ ժամանակամիջոցում ընդհանուր վերատեսուչների պաշտօնատեղերը թափուր մնան, Բ. Դուռը ակնկալում է յիշեալ ընդհանուր վերատեսուչներ ընտրելու համար Մեծ Պետութիւնների բարեհաճ աջակցութիւնը։

Օրէնքներ, հրամանագրեր և պաշտօնական յայտարարութիւններ պիտի հրատարակուին իւրաքանչիւր հատուածում տեղական լեզուներով։ Իւրաքանչիւր կողմն իրաւունք պիտի ունենայ դատարանների և վարչութեան առաջ գործածել իր լեզուն, երբ Ընդհանուր Վերատեսուչը հնարաւոր կ՚համարի այդ։

Դատարանների վճիռները պիտի գրուին թիւրքերէն և, եթէ հնարաւոր է, պիտի կցել կողմերի լեզուով մի թարգմանութիւն։

Ամեն մի վիլայէթի ժողովրդական լուսաւորութեան բիւդջէում իւրաքանչիւր ազգատարրի (élément ethnique-ունսուր) բաժինը պիտի նշանակուի կրթական տուրքով ժողովրդի լուսաւորութեան համար իր մասնակցութեան համեմատութեամբ։ Կայսերական կառավարութիւնը ոչ մի արգելք չ՚պիտի յարուցանի հասարակութիւնների մէջ, եթէ կրօնակիցները կ՚նպաստեն իրենց դպրոցների պահպանման համար։

Ամեն մի օտոմանցի պարտաւոր է կատարել իր զինուորական ծառայութիւնը խաղաղութեան և հանգստութեան ժամանակ այն զինուորական վերատեսչութեան շրջանում, ուր նա բնակւում է։ Այնուամենայնիւ Կայսերական Կառավարութիւնը պիտի ուղարկի, մինչև նոր կարգադրութիւն, Եէմենի, Ասսիրեայի և Նեջդի հեռաւոր տեղեր ցամաքային զինուորական զօրամասեր, որ պիտի հաւաքի Օտոմանեան Կայսրութեան բոլոր մասերից, այնտեղ բնակուած բնակիչների թուի համեմատութեամբ։ Բացի դրանից պիտի զինուորագրի ծովային բանակի համար ամբողջ կայսրութեան միջից առնուած նորակոչեր։

«Համիդիէ» զօրագնդերը պիտի վերածուին պահեստի հեծելազօրքի։ Նրանց զէնքերը պիտի պահուին զինուորական պահեստարաններում և նրանց կ՚բաժանուին միայն զօրաշարժի կամ ռազմափորձի ժամանակ։ Նրանք պիտի գտնուին իրենց պատկանեալ շրջանի զօրաբանակի հրամանատարների հրամանների տակ։ Խաղաղութեան ժամանակ զօրագնդերի, վաշտերի և հատուածազօրքերի սպաները պիտի

ընտրուեն Օտոմանեան Կայսրութեան զործօն բանակից։ Այդ զօրագնդերի զինուորները պիտի ենթարկուեն զինուորական ծառայութեան մի տարի ժամանակով։ Այնտեղ ընդունուելու համար իրենք պիտի հայթայթեն իրենց ձիերը զրանց սարք ու կարգով։ Ամեն մի մարդ, առանց ցեղի և կրօնի խտրութեան, որ գտնուում է նոյն զինուորական շրջանում և որ կ՝համակերպի այդ պահանջներին, պիտի կարողանայ զինուորագրուել յիշեալ գնդերում։ Ռազմաֆորձի կամ զօրաշարժի առիթով հաւաքուած այդ զօրագնդերը պիտի ենթարկուեն կարգապահական նոյն կանոններին, ինչ որ գործադրուում են կանոնաւոր զօրագնդերի համար։

Վիլայէթների ընդհանուր խորհուրդների իրաւասութիւնը ստուգուած է Մարտի 13 ի 1329 (1913) թուի օրէնքի սկզբունքների համաձայն։

Վերջնական մի աշխարհագիրը, որ պիտի ձեռնարկուի Ընդհանուր Վերատեսուչների հսկողութեան տակ ամենակարճ ժամանակամիջոցում, կարելիութեան սահմաններում չ՝պիտի մի տարուց անցնի, պէտք է վերականգնի երկու հատուածների տարբեր դաւանանքների, ազգութիւնների և լեզուների ճշգրիտ համեմատական չափը։ Մինչ այդ Վանի և Բիթլիսի կոմիտէների (էնջումէն) և Ընդհանուր Խորհրդների ընտրեալ անդամները պիտի լինեն կիսով՝ մուսուլմաններ և ոչ մուսուլմաններ։ Էրզերումի վիլայէթում, եթէ վերջնական աշխարհագիրը չ՝կազմուի մի տարուայ ժամանակամիջոցում, Ընդհանուր Խորհրդի անդամները նոյնպէս պիտի ընտրուեն հաւասարութեան հիմունքով, ինչպէս վերոյիշեալ երկու վիլայէթներում։ Սըվազի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայէթներում Ընդհանուր Խորհուրդների անդամները այժմուանից պիտի ընտրուեն համեմատութեան սկզբունքի հիմունքով։ Դրա համար, մինչև վերջնական աշխարհագիրը, ընտրող մուսուլմանների թիւը պիտի որոշուի վերջին ընտրութեան հիմք ծառայող ցուցակների համաձայն, իսկ ոչ մուսուլմանների թիւը պիտի նշանակուի այն ցուցակներով, որոնք կ՝ներկայացուեն իրենց հասարակու-

թիւններից։ Բայց եթէ նիւթական դժուարութիւններն այս ժամանակաւոր ընտրողական սիստեմը դարձնեն անգործնական—Ընդհանուր Վերատեսուչները իրաւունք ունեն առաջադրել երեք վիլայէթների՝ Սբվազի, Խարբերդի և Դիարբեքիրի Ընդհանուր Խորհրդների աթոռների բաշխման համար մի այլ համեմատական չափ, որն աւելի է համապատասխանում նոյն վիլայէթների ներկայ կարիքներին և պայմաններին։

Այն բոլոր նահանգներում, որտեղ Ընդհանուր Խորհուրդները պիտի ընտրուեն համեմատական սկզբունքի հիմունքով, փոքրամասնութիւնը պիտի ներկայացուցիչ ունենայ կոմիտէի մէջ (էնջիւմէն)։

Եթէ ընդհանուր վերատեսուչները չեն տեսնում արգելոտիթներ, պիտի գործադրուի հաւասարութեան սկզբունք, մուսուլմանների և ոչ մուսուլմանների մէջ, երկու հատուածների ոսաիկանական և ժանդարմերիական զինուորագրման նկատմամբ այն չափով, ինչ չափով որ պաշտօնատեղերը կ'թափուրանան։

Երկու հատուածներում հաւասարութեան նոյն սկզբունք պիտի գործադրուի, որչափ հնարաւոր է, բոլոր միւս հանրային պաշտօնէութեանց բաշխման ժամանակ։

Դաշն 26-ն յունուարի 1914 թ.

ՊՕՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱՅԻ ՆԱՄԱԿԸ

Times-ի խմբագրին:

Պարոն Խմբագիր.

Մօտաւորապէս մի տարի առաջ, երբ բարենորոգումների խնդիրը նորից սկսում էր դրուել Եւրոպայի առաջ, դուք ստացաք մի նամակ, ուր ես ուղղել էի ձեզ, հարցը իր իսկութեան մէջ պարզաբանելու համար և լաւ ճշտելու թիւրքահայերի պահանջների բնոյթը, որոնց դատը պաշտպանելու համար ես ստացել էի յանձնարարութիւն։ Հերքելով աւելի կամ պակաս ցնորական հայեցակէտերը, որ վերագրում էին նրանց, ես բարցարձակապէս յայտարարե-